


“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆՐ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆՁԻ ԳԱՆ։” Ղուկ. ԺԸ. 16։

ՀԱՏՈՐ ԺԷ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1888 ԹԻՒ 8

### ՖՈՆ ՌԱՆՔԷ ՊԱՏՄԱԳԻՐԸ

Վիլհէլմ Ա. Գերմանիոյ ծերունի կայսեր մահուանէն քանի մը ամիս առաջ մեռաւ ուրիշ երեւելի Գերմանացի մը, այն եւս աւելի քան 90 տարեկան։ Նա էր Լէոփոլտ Ֆոն Ռանքէ պատմագիրը, որոյ կենդանագիրը կը դնենք այսօր։ Այն մարդը որ զօրաւոր գրիչ կը շարժէ, նո՛յնչափ զօրութիւն է աշխարհի մէջ որչափ այն մարդը որ կը շարժէ արքունի գաւազան կամ սուր։ Հին Յունաստանի քաղաքական իշխաններէն և ոչ մին երբէք այնչափ ազդեցութիւն ունեցած է՝ որչափ ունեցած են Պղատոն կամ Արիստոտէլ իրենց գրութիւններով. վասն զի այն գրութիւնք պահեցին իրենց զօրութիւնը հեղինակներուն մահուանէն դարեր ետքը։ Եւ ինչպէս որ Վիլհէլմ Ա. կայսր արժանի է պատուով և երախտագիտութեամբ յիշուելու՝ վասն զի գործածեց իւր մեծ պաշտօնը իւր ժողովրդեան բարօրութեան համար, այսպէս նաև Ֆոն Ռանքէ արժանի է Գերմանացւոց երախտագիտութեան, վասն զի ճոխացուց անոնց մատենագրութիւնը ընտիր գիրքերով։

Թերևս դիւրին երևի պատմութիւն գրելը. բայց զայն լաւ գրելու համար բարձր կարգի յատկութիւններ պէտք են։ Առաջին կարգի պատմագիր մը պարտի ըլլալ աշխատասէր, որով կարող ըլլայ տարիներով զբաղիլ քննելու հին ձեռագիրներ և արձանագրութիւններ. պարտի ունենալ զօրաւոր յիշողութիւն և ողջամիտ դատողութիւն, այնպէս որ կարող ըլլայ զատել սուտը ճշմարիտէն, և գտնել դէպքերուն ստոյգ պատճառները. երևակայութիւն՝ որով կարող ըլլայ պատկերացունել իւր մտաց մէջ անցեալ դարերու և ուրիշ երկիրներու տեսարանները. և հաճելի ոճ՝ որով կարդալու հրապուրէ իւր ընթերցողները։ Ֆոն Ռանքէ մեր ժամանակակից մեծագոյն պատմագրաց մին էր, վասն զի ունէր վերոյիշեալ յատկութիւնները։ Անոր ամենէն հռչակաւոր գործն եղաւ վեշտասաներորդ և եօթնևտասներորդ դարուց Պապերուն պատմութիւնը։ Գրեց նաև “Հինգ Գիրքեր Բրուսիոյ Պատմութեան,” “Գերմանիա, Բարեկարգութեան Ժամանակները,” և ուրիշ բազմաթիւ պատմութիւններ։ Երբ 80 տարեկան եղաւ, սկսաւ “Պատմութիւն Աշխարհի” անունով գիրք մը որոյ վեց ստուար (խոշոր) հատորները աւարտած էր երբ մեռաւ։ Պապը արգելեալ գրեանց ցանկին մէջ դրաւ անոր գիրքերէն մին որ “հարկաւ,” կ'ըսէ ուրիշ հեղինակ մը, “մեծ պատիւ էր Ռանքէի։”



ՖՈՆ ՌԱՆՔԷ ՊԱՏՄԱԳԻՐԸ

---

### “ՈՒ ՁԱՆՈՆՔ ՄԷԿ ՊԶՏԻԿ ՏՂԱՅ ՄԸ ՊԻՏԻ ՔՇԷ։” Եա. ԺԱ. 6։

Այս խօքերը շատ անգամ կատարուած են փոքրիկ տղայոց պատմութեան մէջ։ Քանի մը ամիս առաջ կրօնքի վրայ բոլորովին անհոգ մարդ մը երեկոյ մը կը պատրաստուէր անկողին մտնել։ Անոր փոքրիկ աղջիկը իբր մէկ ժամ առաջ պառկած էր հօրը անկողնոյն քով, և երբ հայրը եկաւ անկողին մտնել, աղջիկը արթնցաւ և

նայելով անոր երեսը՝ չարժեց իւր ձեռքը և ուզեց ետ հրել զնա և ըսաւ, “Հայրիկ, մի մտներ անկողին մինչև որ չըսես քու աղօթքդ։” Հայրը հաճոյք զգալով ասկէ բայց բանի տեղ չդնելով իւր փոքրիկ աղջկան այս վարմունքը, ձեռքը երկնցուց վերմակը վեր առնուլ, և ահա աղջիկը դարձեալ շատ թախանձելով ըսաւ, “Հայր, կ'աղաչեմ մի մտներ անկողին մինչև որ չըսես աղօթքդ։ Երկնաւոր Հայրը չսիրեր աղօթք չընողը։” Հայրը կանգ առաւ և ըսաւ, “Սիրելիս, ես տարիներէ ի վեր աղօթք ըրած չեմ։ Աղօթք ընել չեմ գիտեր. պէտք է որ սպասես մինչև որ հայրիկդ աղօթք ընել սորվի։” “Հայրիկ, պէտք չէ որ անկողին մտնես մինչև որ չըսես աղօթքդ,” նորէն ըսաւ աղջիկը։ “Ծնկան վրայ եկուր, և ձեռքերդ իրար բեր, և ես պիտի ըսեմ քեզ թէ ինչ ըսելու ես։” Անհոգ հայրը, լոկ իւր աղջկան սիրտը չկոտրելու համար, վասն զի շատ կը սիրէր զնա, ծնկան վրայ եկաւ ձեռքը ձեռքին վրայ դրած, և կրկնեց իւր մանկան հետ անոր երեկոյեան աղօթքը, այսպէս.

“Հիմա ես որ պառկիմ պիտի,
Յի՛սուս, աղօթք կ'ընեմ քեզի.
Բոլոր մեղքերըս, Տէր, ներէ
Եւ սա գիշերըս զիս պահէ.
Թէ որ նորէն ես չարթըննամ,
Շնորհէ, ով Տէր, որ քովըդ գամ. Ամէն։”

“Հիմա պառկէ,” ըսաւ աղջիկը, և մէկ վայրկենէն քունը տարաւ։

Բայց հայրը կարող չեղաւ քնանալ և ժամերով արթուն մնաց։ Պառկած տեղը կը պտըտցունէր իւր մտքին մէջ իւր մանկան օտարոտի վարմունքը։ Նախ կարծեց թէ իւր կինը խրատուած էր աղջկանը որ ըսէր այն խօսքերը։ Երբ կինը, որ գործով զբաղած էր քովի սենեկին մէջ, ներս եկաւ, մարդը հարցուց անոր թէ բան մը պատուիրա՛ծ էր արդեօք աղջկանը որ ըսէր իրեն երբ գար անկողին մտնել։ Կինը պատասխան տուաւ թէ բան մը չէր ըսած անոր։ Հայրը մտածեց այս բաներուն վրայ իւր սրտին մէջ, և սա եղաւ արդիւնքը որ խորունկ կերպով խորհել սկսաւ իւր հոգւոյն վրայ։ Ըսաւ ինքնիրեն, “Իմ վեց տարեկան փոքրիկ աղջիկս յանդիմանեց իմ աղօթք չընելս, մինչ ամպիոնէն խօսուած քարոզներ ազդած չէին ինձ այդ մասին։”

Շատ չանցաւ, Քրիստոսի վրայ իւր հաւատքին դաւանութիւնը տալով եկեղեցւոյ անդամ եղաւ։ Փոքրիկ աղջիկն եղաւ միջոց զոր Աստուած գործածեց անոր հայրը Յիսուսի բերելու։

---

## ԿԵՆԱՑ ՆԱՒԱԿ

Աղէկ որ հազարաւոր մարդիկ շատ հրապուրիչ կը գտնեն նաւաստիի կեանքը՝ այնպէս որ զայն կ'ընտրեն հակառակ անոր վտանգներուն, նաև աղէկ է նաւաստեաց որ կողմնացուցի գիւտը և նաւաշինութեան մեծ զարգացումները մեծապէս նուազեցուցած են այն վտանգները։ Հիմա փորձառու նաւաստի մը քիչ հոգ կ'ընէ ամենէն կատաղի փոթորկաց համար, միայն թէ գիտնայ որ իւր նաւը հաստատուն է և բաց ծովուն մէջ կը գտնուի։ Նաւավարը կը վախնայ ժայռուտ ծովեզրներէ, և բարեբաղդաբար բուն հոս է ուր կրնայ օգնութիւն գտնել։ Այս կ'ըլլայ երկու կերպով։ Ծովեզրները աստ և անդ կը գտնուին փարոսներ, որոց ամէն մէկը կը ճանչնայ նաւուն հրամանատարը լոյսերուն գոյնէն և վիճակէն, և ատոնց օգնութեամբ կարող է, եթէ գիշեր ատեն մօտենայ վտանգաւոր ծովեզրի մը, զգուշանալ ծածկուած ժայռէն, և երթալ ապահով նաւահանգիստ մը։ Բայց եթէ սաստիկ փոթորիկ կայ, այնպէս որ կը տեսնէ թէ կը քշուի ժայռերուն վրայ հակառակ բոլոր իւր կարողութեամբ աշխատելուն, այն ատեն ուրիշ բան չմնար ընելիք, բայց եթէ թողուլ իւր նաւը իբրև կորսուած, և միայն նայիլ որ ազատէ իւր և իւր նաւաստեաց կեանքը։




ԿԵՆԱՑ ՆԱՒԱԿ

Ա՛յս պարագայից մէջ է որ նաւաբեկեալներու ազատարար վարչութենէն կու գան օգնութեան։ Այն գիրքը որմէ ձեր առջև դրուած պատկերն առնուած է, կ'ըսէ թէ միայն Մեծին Բրիտանիոյ ծովեզերաց վրայ ամէն տարի միջակ հաշուով իբր 2,000 նաւաբեկութիւնք կը պատահին։ Երբեմն նաւաստիք կարող կ'ըլլան ազատուիլ և ցամաք ելլել առանց դուրսէն օգնութիւն հասնելու, բայց երբ այս անկարելի է, թնդանօթ կ'արձակեն կամ հրթիռներ (ֆլէյըրս) կը նետեն դէպ ի օդը իբրև նշան թէ վտանգի մէջ կը գտնուին իրենք, և ազատարար վարչութեան մարդիկը կը փութան օգնութեան հասնիլ անոնց։ Այն քաջ մարդիկը որ կենաց նաւակով կու գան նաւաբեկեալներուն, վտանգի մէջ կը դնեն իրենց կեանքը՝ կորսուելէ ազատելու համար ուրիշներուն կեանքը, և, ինչպէս արդարութիւն է, լաւ վարձք կ'ընդունին, և շատ մը ոսկի և արծաթ շքա-

դրամներ (Փօու) կը տրուին անոնց՝ իրենց մասնաւոր քաջութեանց համար։ Եթէ իրենք կորսուին, գիտեն որ իրենց ընտանիքները պիտի ընդունին կառավարութենէն հանգստեան թոշակ։ Աւելի քան վեց տարի առաջ տեղեկութիւն տրուեցաւ թէ Նաւաբեկեալներու ազատարար վարչութեան հաստատուելէն հետէ, որ իբր 60 տարի կ'ընէ, 30,000 կեանքեր ազատուած էին Մեծին Բրիտանիոյ ծովեզերաց վրայ։

Երբ անկարելի է կենաց նաւակին դէպ ի ծով յառաջ երթալ, հրթիռ մը կ'արձակուի դէպ ի վտանգի ենթարկուած նաւը՝ անոր կապելով բարակ չուան մը։ Նաւաստիք կը բռնեն այս չուանէն և կը քաշեն զայն նաւուն մէջ։ Այս չուանին հաստ պարան մը կապուած է, և ասոր ալ աւելի հաստ պարան մը, որուն վրայ փոքրիկ կառք մը ետ և յառաջ կը շարժի անոր հաստատուած չուաններու միջոցաւ։ Նաւաստիք մի առ մի կը մտնեն կառքը, և կառքը ետ և առաջ կ'երթայ կու գայ մինչև որ ամենքն ալ կ'ազատուին։

---

## ԱՐՄԱՒԵՆԻ

Անցեալ տարի հնդկընկուզի ծառի մը պատկերը դրինք Տղայոց Աւետաբերին մէջ, և խօսեցանք թէ ինչ մեծ արժէք ունի այն Խաղաղական Ովկիանոսի բնակչաց համար։ Արմաւենին ալ նոյնչափ պատուական է Սահարայի Ովասիսներուն և Արաբիոյ մէջ բնակողներուն։ Այն երկիրներուն մէջ կան միլիոնաւոր մարդիկ որոնք շատ անգամ չունին ուրիշ ուտելիք բաց ի արմաւէն։

Արմաւենին նշանաւոր կերպով բարեբեր է։ Ծաղկիլ կը սկսի Դեկտեմբերին, և կը շարունակէ ծաղկիլ մինչև Մարտ։ Ամենէն կանուխ՝ Յունիսին կը հասնի պտուղը, բայց այնուհետև հետզհետէ պտուղ կը հասցունէ մինչև Նոյեմբեր, այնպէս որ ծառը բոլոր տարին կը գործէ։ Տուած պտուղն ալ խիստ առատ է։ Իւրաքանչիւր ծառ կու տայ միջին հաշուով տարին 150 քաշ արմաւ։ Ուստի զարմանալի չէ որ տաք երկիրներու բնակիչք սրբազան կը համարին արմաւենին։ Հաճոյական յիշատակներ կ'արթնցունէ արմաւենին Աստուածաշունչ կարդացողներուն մտքին մէջ։ Իսրայելացիք երբ կ'երթային Սինա, և հասան Եղիմ, գտան հոն տասներկու աղբիւր և եօթանասուն արմաւենի։ Արմաւենեաց կամ Տաղաւարաց տօնը (տես Յովհաննու ԺԲ. 12, 13 համարները) ամէնքս ալ գիտենք թէ ինչ բանէ ծագում առաւ։ Եւ Յայտնութեան Է. 9 համարին մէջ գրուած է այնպիսեաց վրայ "որոնք աթոռին առջևը ու Գառնուկին առջևը կեցեր էին՝ ճերմակներ հագած և ձեռքերնին արմաւենիներ բռնած։"

Արմաւենին բաց ի ուտելու արմաւտալէ ուրիշ օգուտներ ալ ունի։ Անոր ներքին կեղեէն թելեր կ'ելլեն որոցմէ կը գործուի հանդերձ շինելու կտաւ։ Փայտէն կը շինուի տուն, և անոր տերևներովը կը ծածկուի տանիքը։ Տաւէն կը շինուին նաև սակառներ, վրձիններ, փսիաթներ և շատ մը ուրիշ



ԱՐՄԱՒԵՆԻ

կահ կարասիք. շաքար, քացախ և տեսակ մը ոգելից ըմպելի՝ անոր տերևներուն հիւթէն։ Իրօք այն երկիրներու բնիկները որ գիտեն այս ծառին բոլոր օգուտները քաղել, կրնան ապրիլ առանց ուրիշ բաներու պէտք ունենալու։

---

## ՄԱՐԹ ՄԱՆԹՈՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Մարք Մանթոն սկսաւ իր տասնևհինգ տարեկան եղած ժամանակը շինել յիշատակարան մը և լմնցուց զայն երբ եղաւ յիսուն տարեկան։ Կ'աշխատէր գիշեր ցերեկ, շատ անգամ գիշերն ամբողջ և կիրակի օրերն անգամ։ Կը թուէր թէ շատ կ'արտորար լմնցունել զայն։ Իր շահած բոլոր ստակը անոր վրայ խարճեց, ոմանք կ'ըսեն 10,000 Անգղիական լիրա։ Այնուհետև փոխ առաւ որչափ որ կրնար. և երբ ոչ ոք կ'ուզէր փոխ տալ այլևս, իր կնոջ հանդերձներն առաւ, նաև անկողնոյ վերաբերեալ լաթեր և տան մէջ գտնուած ուրիշ արժէքաւոր բաներ, և ծախեց զանոնք որպէս զի աւելի ստակ ձեռք բերէր այն յիշատակարանը լմնցունելու համար։

Կ'ըսեն թէ օր մը եկաւ և պիտի առնուր վերմակները որ ձգուած էին իր քնացող մանկիկին վրայ զայն տաք պահելու համար, և կինը ջանաց արգելել զնա. բայց նա վեր առաւ իր ձեռքը և բռունցի մը հարուածով գետին տարածեց կինը. յետոյ վերմակները ժողվելով առաւ գնաց և այլ ևս ետ չբերաւ զանոնք. և խեղճ մանկիկը ցուրտ առնլով հիւանդացաւ և մեռաւ։ Վերջապէս տան մէջ ա՛լ բան չմնաց։ Ողորմելի և սրտաբեկ կինը շուտով գերեզման իջաւ իր մանկան ետևէն։ Բայց Մարք Մանթոն աւելի աշխատժիւ կ'աշխատէր լմնցունելու իր յիշատակարանը։ Տեսայ զնա երբ էր իբր 50 տարեկան, բայց այնքան սաստիկ աշխատած էր գործին վրայ, որ դժուարաւ ճանչցայ զնա վասն զի շատ նիհարցած էր. հանդերձները պատառպատառ եղած էին ամէնքն ալ, և ձեռուըները և երեսը և արդարև իր ամբողջ մարմինը ծածկուած էր սպիներով զորս ընդունած էր քարերէն քանի մը հատը իրենց տեղը դնելու ատեն։

Հիմա ինծի հետ եկուր և ես ցուցընեմ քեզի Մարքի յիշատակարանը։

